



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

№ 1

ՀՐԵՍՔԵԼԻԹԻՒՆ ՊՏԵՓԱՆ ՂԱՆԹԱՐՁԵԼԵՑԻ.

# ԳՈՒԹ-ԸՆԾԻՈՐՆԵՐ

(Եկեղակաց գիւղական կեանքից)



Ա շ է մ ո ր մ ո ր է շ է շ

ՄՆԱՑԱԿԱՆ Ա. ԹԱՄՐԱՋԵԱՆՑ.



ԱՐԵՔԱՆԴՐԱՊՈԼ  
ՏՊԱՐԱՆ ԴԵՈՐԴ Ա. ՍԱՆՈՑԵԱՆՑԻ.

1890

891.99


7 - 20

ՀՐԵՍԵՐԵԿՈՒԹՅԻՆ ԱՏԵՓԱՆ ՊԵՆԹՈՒՅԵՑԵՆՅԻ.

№ 1

## ԳՈՒԹԱՆԱՒՐՆԵՐ

(Շիրակաց գիւղական կեանքեց)



Ա շ բ ո ւ ս ո ւ է զ է ց

ՄՆԱՅԱԿԱՆ Ա. ԹԱՄՐԱԶԵԱՆՑ.



ԱՆՔԲԱՆԴԻՐԱՊՈԼ

ՏՊԱՐԱՆ ԳԵՈՐԳ Ա. ՄԱՆՈՅԵՆԵՑԻ

1890

ԹԱՎԱԾԱՎԱՐԱԿՈՒՄ  
ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ  
ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՎԱԿԱՆ

Խաչ  
No

## ՑԱՐԱՎԱՐԱՆ

Վերջին տարբներում մեր ժողովրդեան ստորին դասակարգի մէջ բաւական ընդհանութեացել է սէր դէպի ընթերցանութիւն: Մանաւանդ ժողովուրդը այնպիսի գրքեր է աւելի սկզբով կարգում, որոնք նոր հասկացողութեան և զարգացման աւելի մօտ են: Օք. մեր գաւառում ժողովրդեան ստորին դասակարգը, հինգ աւելի գիւղացիք մէջ եռանգով և անշագաբար կարգում են մեր յաշտնի երգիչ պարոն Զիւանու աշխատութիւնները: Առ էլ ցանկալով ըստ իմ կարողութեան օժանդակել ժողովրդի ընթերցասերութեանը, լոյս ընծանեցի սոյն աշխատութիւնն՝ Գութանաւորներ, ո շերակայ գիւղական կեանքեց:


Թէ նրան յարմար է սոյն աշխատութիւնը ընթերցանութեան համար, այդ մասին թողնում եմ սկսելի ընթերցողներին դատել:

Աս իմ կարողութեան յափով աշխատեցի գրել, իսկ ով աւելի կարող է, թող չպահայ կատարել:

Մ. Թամրաղեանց:

Дозв. Цензурою. Тифлисъ, 22 Янв. 1890 г.

184



Типографія К. Сапоянца, въ Александрополь, Бебутовская ул., ссобств. д.

卷之三

... 18.000 m³. A 1990-es években azonban a 2000-as évek elején a folyóvízszint csökkenés miatt a vízmennyiség körülbelül 10%-kal csökkent. Ezáltal a vízszintes környezetben a vízmennyiség növekedése után a vízmennyiség csökkenése következik. Az erőmű által termelt energia összesen 1000 GWh, amelyet a hálózatban közvetlenül elszállítanak.

Digitized by srujanika@gmail.com

ՆՈՒՅՆ ԱՐԱԳԱԾ ԼԵՐԱՆ.

**Φαρισαῖς εἶπεν ἡμῖν οὐκ εἰσελθετε εἰς τὸν ναόν,  
διὰ τοῦτο μηδὲ εἰσελθετε εἰς τὴν πόλιν,  
τί τοι διέβλεψαν τὸν λαόν τοῦτον,  
θωρακίσθητε τοῦτον εἰς τὸν ναόν;**

Գորակներեղ, միջնցը,  
Քըքըզալով գնում են,  
Հաղար ու մի պէճանքով,  
Պարզ ըշերդ, Աբագած:

Մեղքեց անուշ՝ ջրերդ,  
Գալաթեցդ ցած գալովի,  
Խոստանում են առողջ կեանք,  
Տալ ամենքին, Արագած,

Թէւ գլուխը ծածկուած,  
Մառախւապատ ամպերով,  
Առողջաբար օդըդ նւմ  
Զէ հիացըեւ, Արագած:

Նորապսակ Հարսի պէս,  
Զարդարուում ես, պճնըուում,  
Ուկի մանեակ քո կործքիդ  
Պալըզում է, Արագած:

Քո սաց ու ձօք լցուում են,  
Քաղցրանուագ թռոչնիներ,  
Մանիշակին ու լարդին  
Դոլում են միշտ, Արագած:

Իսկ մայխին բացուում են,  
Հաղար ու բեւը ծաղկունքըգ,  
Անուշ հոտըդ բուքում է,  
Իմ սիրելի Արագած:

Գաշտըդ, կուրծքըդ լցուած են,  
Բարձրագմբէթ վանքերով,  
Արձան, քանդակ և մանուածք,  
Լի են մեշերըգ, Արագած:

Հնադարեան ըեկորներ,  
Ունիս վրսեմ արշեստի,  
Կարծես նոր է աւաբտել,  
Ճարտարապեան, Արագած:

Նշանարք քաջաց անկորուստ,  
Ամփովուած են քո կըրծքում,  
Ով դու խորան սըսութեան,  
Մեծահըռչակ, Արագած:

Ալցաւանըդ թաղեցին,  
Տիգրամին ու Խոսըլին,  
Մովսէս Հայըք ծընուեցաւ,  
Եղուարդ գիւղդ, Արագած:

Դիտունք, քաջեր, դիւցազներ,  
Քո ծոցիցըդ դուքս եկան,  
Նըրանք եղան պիտանի,  
Քո Հայ ազգին, Արագած:


Հայկ նահապետի ողբու,  
Արմենակի անունալ,  
Կողուեցաւ քո անունդ,  
Քաղցըր, սիրուն Արագած:

Ստորոտիդ վըռուած են,  
Մօտ քաւասուն դար լվէւ,  
Դիւղօրայքըդ բաղմածարդ,  
Քո շնորհիւ, Արագած:

Մօտ չորս հազար տարի է,  
Քո վեհ պայծառ անունդ,  
Դըրօշմած է մեր ոքառում,  
Իմ ծերունի Արագած:

Քո արեղարդ գլուխը,  
Կապոյտ ամպերի մեջից,  
Վաեմութեամբ վազում է,  
Գերգ արուսեակ, Արագած:

Թէե քո վսեմ անուն,  
Առած եմ թուլ գոշխ տակ,  
Ներբ, իմ յանդգնութեան,  
Ով դու մեծը, Արագած:



## ԳՈՒԹԱՆԱՒՐՆԵՐ

(ԵԽԵՎԱՅ ԳԻՒՂԵՎԱՆ ԿԵԱՆՔԻՑ)



Ամառնային պարզ և զուարժ առա-  
ւոտներից մէկն էր: Արագածի դագաթից  
արեւ կամաց կամաց արձակում էր իւր  
լուսոյ ճամանչները, որոնք ընկնելով կանաչ-  
ների վրայ, ոսկեզօծում էին նրանց, և նա-  
յովի աչքերը շացնում էին: Խօկ Արագա-  
ծը սպիտակ քողը երթօին առած՝ նայում  
էր իր հովանաւորութեան յանձնուած հը-  
նագարեան Երակին: Արդարեւ, ակամաց ից  
այդ հսկայ ծերուկը մարդի ուշադրու-  
թիւնը գրառում էր. այն ծերուկը, որ  
մեր նախնեաց վանօրէից և մենաստան-  
ների աղաստանարան է եղել և որը մեզ

տուել է բիւրաւոր քաջեր։ Ահա այդ Արագածի ստղուտում Ա. քաղաքի արգաւանդ և կանաչ արտերի մէջն էի, տեսարաններին նայում ու զմոցլուում էի։ Նուրջս երգում էին բազմաթիւ քաղցրախօս թռչուններ, սրոնք ճախրաւմ էին անթիւ ու անհամար գոյնզգոյն և անուշահոտ ծաղիկների մէջ։ Հրձուում էր նոյնպէս ճարայի հարազատ ժառանդ Նիրակեցի, աշխատասեր և անխունջ մշակը։

**Կամենալով** մասնակցել բնութեան զուարձութիւններին՝ յարմար դատեցի Ճանապարհորդել դէպի հիւսիս-արևմուտք—  
**Մարմաշէն** (Ղանլիճա)։ Ակսեցի Ճանապարհորդել կէս ժամ անընդհատ քայլելով՝ հասայ Ա. քաղաքի սահմանաքարին, որին մեր ժողովուրդը անուանում է Խաչքար կամ Խաչ-արձան։ Ես մօտեցայ այդ սրբութեանը. սիրտս սկսեց բնակա-

նից աւելի տիսրել կարծես նոր զգացի, որ դա մեր մնացած անդին սրբութիւնն է։ Քարասիրտ մարդ պէտք է լինէր, որ այդ յիշատակութեամբ չարտասուէր։ Թէև Խաչքարը մամուապատ էր, բայց սրբոյն Մեսրովբայ անմահ յիշատակաց հետքերը լինելով, կարծես անուշահոսութիւն էր բուրումնրանից։

Բարեմաղթելով զբան հասատութիւն, հետացայ. Մինչդեռ Ճանապարհին տոշորուում էի Խաչքարի յիշատակներով, յանկարծ տչքս վեր բարձրացնելով դէպի ձափակողմեան ձորակը, տեսայ նրա մէջ աւերակների հետքեր։ Քայլերս ուղղեցի դէպի սյդ աւերակները, մտածելով որ թերաւս մի նշանաւոր յիշատակութիւն գտնուի նրանցում։ Անցնելով օձաւոսոյտ նեղ Ճանապարհով՝ հասայ նրանց. բայց ափսոն, ոչինչ չգտայ։ Աւերակների մէջ տիրում էր զերեզմանական լուսութիւնն. միայն երբեմն

այդ լոռութիւնը խսնգարում էին չարա-  
դուշակ բուերի և այլ թռչող ձայները:  
Խնձ մեծ վախ պատճառեց, երբ մի փլա-  
տակի տակից դուրս եկաւ մի ալեզարդ  
միջահասակ ծերունի, ձեռին մի հոլուա-  
կան ցուպ: Մօտեցայ այդ ծերունուն և  
ողջունելով նրան, խնդրեցի մի տեղեկու-  
թիւն հազորդել աւերակների մասին,  
եթէ դիտէ: Նա էլ պատմեց ժողովրդեան  
մէջ մնացած աւանդութիւնը: Նրա ասելով՝  
այդ աւերակները կոչուում են «Մուղան-  
չաղրազ», երեք մի թուրք բռնակալի ա-  
նունով՝ Ծերունին երբ վերջացրեց իւր հա-  
մառօտ պատմութիւնը, նրան շնորհա-  
կալութիւն յայտնելով՝ շարունակեցի ձանա-  
պարհու: Այդ աւերակներից քիչ հետու՝ մի  
խոշքար ևս կար կանգնած ժայռի վե-  
րայ, ճիշդ ձորի ափին. մօտեցայ նրան,  
բայց ոչինչ արձանագրութիւն չդժայ, բացի  
աննման քանդուկագործութիւնից, որը մար-

դու աչքերը շլացնում է: Դարձեալ  
խորասուզուելով մոտածութեան մէջ, մի խո-  
րին ա՛ս, քաշեցի և իջայ ձորք: Ճանա-  
պարհին պատահեցի այն ուխտատեղի գե-  
րեզմանին, որը անցեալ տարի քանդուել  
էր գիւղացիների ձեռքից: Գիւղացիք քան-  
դել էին նրան, իբր նրա մէջ պահուած  
գոնձերը ձեռք բերելու. բայց ի զուրու:  
Թափառական պարաիկ գէրվեշները ժողո-  
վրդեան մէջ ներմուծել են այսպիսի մի  
թիւր կարծիք. որպէս թէ, գանձերը առ-  
հասարակ պահուած կը լինին գերեզմաննե-  
րում: Նրանք գիտութեամբ մեր ժողովրդեան  
մօլըրեցնում են, որպէս զի շատ մահար-  
ձաններ կործանուին իրանց ձեռքով:

Վ երջապէս ձանապարհու շարունակելով՝  
հասայ Մարմաշէն (Պանլիճա) գիւղը, որը  
Վահրամ իշխանի յիշատակն է: Մանելով  
գիւղ, առաջին գործս եղաւ գնալ եկեղեցի,

բայց եկեղեցին փակած էր և ժամակ ոչը  
խռովում էր պատի տակ. ես ձայնեցի  
նրան և մանելով եկեղեցի աղօթեցի. խընդ-  
րեցի Աստծուն անշարժ և անսասան պա-  
հել այսպիսի անմահ և թանկադին յիշաւ-  
տակիները: Այսուհետև հեռացայ բարեկառ-  
միս տունը:

Նախ քան հեռանալս, իմ ուշադրու-  
թիւնս զբաւեցին մի խումբ դիւղացիք,  
որոնք կանդնած էին եկեղեցու պատի տակ  
և տաք տաք խօսում էին:

Ես կանգ առայ և սկսեցի հետաքըր-  
քրութեամբ լսել նրանց խօսակցութիւնը:

Նրանց մէջ էր և դիւղի կորճիկ  
քեօխվէն. որը խօսում էր այսպիս:

— «Տղեք, վախթնա դութանոցի. ահան  
խոտհնձի պատը ելաւ. պլոտի էս կիրակի  
ցորեկետև երթամ մեր ձորի արտը հեր-  
կելու. հրմա լըծկանս քիչա, դութանը չի

չավուրմիշ<sup>1)</sup>) էնէ. մոտկամ<sup>2)</sup> էլ չունիմ:  
Վարոսն ըստ օր, ես կուգամ իմ երկու  
լուծ եզներովս, հմա իմ պղտի տղէս զայ-  
իլ<sup>3)</sup> չեղաւ, ըստ օր, ընտոնց լըծկանը  
շատ զավունս ու մեր հախախն<sup>4)</sup> էլ դաշ-  
պութէն կենէ, ընտուր էն զառղաշայ<sup>5)</sup>  
տղէն: Աղբեր իմ թքածը չեմ լիղէ, ինչ  
գուղէ եզնի, ես եօլայ կ'երթամ էն մարդու  
հետ: Խնամի Կարապետ, դու էլ մեր քա-  
ւոր Բարսեղի հետ լծէ, էրկուսդ էլ խե-  
լօք մարդիկ էք, աղբեր, մեր դրաց ու-  
թիւնը շատ լսւա, ընչի<sup>6)</sup> լսւ չեղնինք.  
Բիլատիքս էլ մէ աղդից էնք. էն անհաւատ  
թուրքելը տեսնըմ էք, ինչինս իրարու  
պահպանում: մէկն օր, նեղութեան մէջա  
ընկնըմ, մէկէլը էրթմա ընտուր էն նեղու-  
թենից աղատըմա:

1) Նուռ տալ: 2) Ընկեր

3) Համաձայն: 4) Հերթ:

5) Զարաձճի:

Տղեք, մեր գեղացոց իշխանները հըմա  
տղքըտի արուն ծըծելով, մալ ու դովլաժ  
ևն էվելցընըմ։ տօ, անխելքներ, ի՞նչ պըտի  
տանիք էս փուճ աշխըրքէն։ տօ, աղբեր,  
ըստ հեշտէ մէ երկուախն էլ չըրաղ<sup>1)</sup> էրէք,  
օր ձեր անուննելն էլ երկուէ երկիր խօսան,  
ինչ ար մեր ջրախլեցի փայլէւհնի հացը.  
օր դոնից անցնող զարձողին ու տացընըմէր։  
Էն մարդը ի՞նչ տարաւ էս փուճ աշխըրքէն—մէ բարի անունըմ։— օր իրանից  
յետե հընեն իրան արդեքը ու թոռները  
ու մէ բարեգործութիւնն էլ ընտոնիք ընեն։  
Մեր հըմիկուայ զանկինները թէ ընտուր ըս  
տեսան, հըմա ընչաքի էս օրս խօսըմ են  
ընտուր անունը. մեր մենծերն էլ ամեն  
վախտ յիշըմ են. թող ըտման մարդկանց  
օրինակ էղնի. հըմա չէ, մեր զանկիններու  
մալը սատանի փայ պըտի էղնի։

1) Հոգատարութեամբ բաղդաւորուած

մարդ։

Քիօլավի խօսքը ընդմիջելով խնամի Կա-  
րապետը (այսպէս էր կոչուում քիօլավն),  
ասաց.

— Աղքեր, մեր ի՞նչ ըսմն ա ուրիշն  
բանբաննը. մեր աշքի գերանը թողել  
ենք, որիշի աշքի չոփն ենք մնն գալոմ,  
մենք մեր դործին աշենք։ Այ, աղբեր, Էն  
քու առաջուայ. խօսքիդ ի՞նչ ըսեմ. Եր-  
թանը գութանի թատարուք<sup>1)</sup> տեսմանք,  
անմենքս մեղի հմար մօտկամ նարենք։  
Տօ, ևս ի՞ն սե հողի բարաքեաթին<sup>2)</sup> մեռ-  
նեմ, օր մեր օր ու, արեն ա. էրթանք  
մեր խամերը հերկենք, օր հաջ զուս գայ.  
խօսալով մեր փորը չի կշտանայ. աղքեր,  
էս քանի՛ տալիա, օր մենք գութան չենք  
լծէ, ընտուր մենք հացից կտրուանք:  
Դէհ, քելէք տղեք, վակ օր գութան պը-  
տի լծէ, թող էրթայ հաճթները սարքէ.

1) Պատրաստութիւն։

2) Սըթիւնք։

վով օր էլ գութանի մօտկամ չե էղնի, թող  
իրան չութը սարքէ: Աղբեկ չթի հերկն  
էլ պակաս չէ գութանիցը. թէ օր լաւ  
ամակով վարես, գարնան հերկ թող էղնի  
էն գարնան զզզուն <sup>1)</sup> արել խորիէ <sup>2)</sup> կը  
թողնի, աև բարութ կը շնէ: Դէ՛հ, տղեք,  
քելք, էլ միք կայնի. մենք ըսման օր  
չենք կրնայ ձեռք քցէ. թէ չէ էլի ձմեռը  
վըայ կ'ուգայ էլի կը մնանք մենք առանց  
հերկի»:

Այս խօսքերից յետոյ՝ խմբի միւս ան-  
դամները իրենց դրացի կարապետի օգտա-  
կար խրաններին լսելով, խկոյն հեռացան  
դործի պատրաստութիւն տեսնելու:

Ես էլ գնացի բարեկամիս տունը:  
Նրեկոյեան արել արդէն մայր էր մանելու.  
Նրա ոսկէիսայլ ճաճանշները ընկնելով

1) Տաք կամ ջնոմ, որը արևին է վերա-  
բեցում:  
2) Այսէլ:

ամսերի շերտերի վերայ, նրանց դիւթա-  
կան գոյն էին տալիս: Մի խօսքով այդ օր-  
ուայ վերջալոյսը ամսուուայ հրաշալի վեր-  
ջալոյսների տիպար կարող էր համարուիլ  
երբ մօտեցայ բարեկամիս զրանը, տան կը-  
տուրից մի ահագլն գտմբու մռմռալով  
սկսեց վոյր իջնել և դալ դէսի ինձ. որքան  
մօտեցաւ, ոյնքան բարձր սկսեց հաշել:  
Բարեկամն խկոյն գուրս վազեց և ինձ  
տեսնելով եկաւ մօտս, ուրախութեամբ ող-  
ջունելով իմ գալուտուը՝ հրաւերեց ինձներս-  
տել չարդախում և ասաց, «Բարեկամ, հմի  
էս գոի չարդաղը շատ հով ա էղնըմ, քանի  
օր, էս գարնան շողերին ներսը շատ շօք ա  
էղնըմ»:

Համաձայնեցի. Խնձ պատուելով համար,  
նա գնաց մի դորդ բերեց քցեց թաղիքի  
վերայ, մի բարձ ևս բերեց խնդրեց նո-  
տել: Յետոյ մօտենալով ինձ բարեկաց, սեղ-

մելով ձեռքս, և ասայ.

— «Եհ, աղբեր, հյա դու բարով հաղար բարի եկար մեր տունը. ի՞նչինէք, լաւ էք, ընչի՞ հեշ չէք գալըմ էրթըմ. հաղլը էրթըլով գալով բարեկամ են դառնըմ, դուք քանի էրթըմ ետառնըմ էք: Հրմա, չէ, հրմի սէրը սուրա դառել, արունը ջուր»:

Ես հարցրի բարեկամուհուս, մօրքըոջս  
ուր լիւելը. նա պատասխանեց:

— «Տօ աղբեր, դու զիտես մեր գեղացոց  
խասեաթը, <sup>1)</sup> հմա գալունը բացուաւ չը  
բացուաւ թէէէ, հարս ու աղջիկ դուս  
են յելրմ ընչարի էս վախար. հըմիկուա-  
նից յետեւ էլ չեն կրնայ էրթայ հանդը  
ման գալու»:

Ալրտարէ, երեկոյեան մութը պատել էր  
աշխարհն, երբ մօրաքոյըս իւր աղջկայ հետ  
նոր տուն եկաւ: Հէնց որ ինձ տեսաւ, վա-

1) Բնաւորութիւն:

զեց բարեեց, և վայր իջեցնելով իւր շա-  
լակածնոր քաղած բանջարեղէնի կապոցը,  
զրեց իմ առաջ՝ ասելով. «Տես ես դիտէի,  
օր դու պըտի մեր տունը գայիր, տիրացու  
ջան, ահան քեզի հրմար սինձ ու էրիմսակ  
եմ քաղել էս էլ մեր գեղացու հատիէնէ<sup>1)</sup>:

Այդ միջոցին բարեկամն հրամայեց իւր  
կնոջ՝ ասելով.

— «Տօ, հաց բերէք, ախըր էս մարդը.  
Ճամբից ա էկէ, անօթի կեղնի. ի՞նչ կայ  
ուտելու»:

Կինը պատասխանեց.

— «Ինչ պըտի էղնի, գեղացու տուն, պա-  
օր, քիչըմ աւելուկով ապուր կայ թընտիւ-  
րը, մէ քիչ էլ թաժայ զիս եմ խաշել. էս  
ի՞նչ պըտի էղնի. քաղքցի չենք, օր չայն  
ու զայֆէն ամեն սընամբ օջաղի վրայ. էղ-  
նի, մերն էլ ապուին աշ:

1) Զը կտնուող բան:

Մարդը հեղնորէն ասաց.

— «Ոտով Գարանը պասկ չլ էրթայ. այ  
ինիկ, յելի, յելի, մէ քանի հառկթով  
ձուածել էրա»:

Վինը մի առանձին հայոցք ձգելով  
մարդուն պատասխանեց.

— «Փա մարդ, չէ՞ ախըր էսօր ուրբաթ ա  
խօ պասերդ ուտելու չէք»:

Մարդն ասաց.

— «Բան չկայ, այ ինիկ, էսօր էլ թող  
ըսման էրթայ. մենք էլ էս բարեկամիս  
ջրովը կը խաշուինք. այ ինիկ, դու զիտես  
օր ես պաս չէ, ժում էլ շատ եմ պահմ,  
տօ միտքդ չէ՞ օր ես քեզի թարիֆէի <sup>1)</sup>  
էնըմ իմ աղապ վախտուաս բաները»:

Յետոյ դառնալով ինձ, ասաց.

— «Բարեկամ, ես էն ոուրբ Սարդըսայ սաղ

1) Պատմութիւն:

շաբաթը ժում էի պահըմ ուրբաթ իրի-  
կունն էլ աղի բըլիթ ուտըմ ու առանց  
ջուր խմելու քնմ՝ էի, թէ տեսնիմ-որ  
աղջիկն ա ընձի ջուր տալըմ: Քանի տարի  
էդ շաբաթը ժում էի պահըմ, բան չէի  
տեսնըմ: տօ աղըրը, Բէրութովի կըու-  
ուի տարին էլ պահեցի, էլի աղի բըլիթ  
կերայ ու քեսոյ, գիշերը երազիս մէկ էլ  
տեսնիմ մի բօյով աղջիկ թուլս աչքերով  
մաղերը տէյ կընկներին էր ծեծըմ: Հրմա  
երեսի վրեն էլ մէ խաչ կար. ընձի ջուր  
տուաւ խմեցի, ընտից մէ քանի օր յետե՝  
հերո գնաց քաղաք. դու մի՛ ըսէ ընձի  
ընտեղ նշանելու ա զնացէ: Մէկ էլ տեսնիմ  
էքսի օրը ելաւ եկաւ. ընձի ըսաւ. Տօ,  
դեադա, յելի զնա մէ քաղաք բեռուդ քո-  
վը, բան պըտի ըսէ քեզի.՝ էն սըհաթին  
ես կոայեցի <sup>1)</sup> թէ ընձի նշանած կեղնի  
հերս. էման ուրախացոյ օր, հօրս խօսքի

1) Նկատել:

վրեն էլ հեռապ չկար ուրախութանս, էն սշաթին յելց ընկայ ճամբայ, հման էման գնացի օր, հե չիմացայ, Մէկ էլ էն տեսայ, օր քեռանցն առնեն եմ, Քին իս ընձի օր տեսած իւղը ըստ .— « Յհ, բարձրվ եղեած նըաւ բարձր, գալրդ բարի էղնի. դէ՛ս քեյլ տուն ». ևս ըսի, և, Չեմ զայ քեռի կուշնամ, ընձի ի՞նչ պատի ըսես, ըսա օր ևս թեզրմ գեղ պատի երթամ, մալի ալաթին,<sup>1)</sup> համնիմ, մալին աշող շոնինք, հերս մենք մարդ ա, մէկ էլ ընտառի ազեաթ չէղնի: Տեռիս ըստ .— « Իէ լաւ, քելէ, տեղ պատի էոթանք ըստ .— ու տարաւ ընձի հիմը, գնացինք մէ փոս տունը մանք, էն սրհաթին մեղի նստեցրին աթօռքների վրայ, քեռիս մէ ջուր ուզեց, մէկէլ մէ սիրուն աղջիկ սօլէն բռնած մօտեցրաւ քեռուս, ևս էլ աչքիս պօչավ աշեցին, տօ ի՞նչ...

1) Մալի կերակուր:

Էն գիշերու այ աղջիկը, օր ընձի ջուր տու աւ, չէ, քիչմ ընտեղ նստանք ու դուս էկանք: Սրթը քեռիս ընձի ըստ .— « Դիտես սպանին աէրն էր, տօ, ևս ըսի. — Քեռի, ի՞նչ պանիրի տէր. — Էնէլ ըստ .— « Զիտես, եղեան, աներանցդ տունն ա. Էն ջուր քերող աղջիկն էլ ըու նշանածդ ա, ևս քեզի քերի, օր ոններանքդ տեսնին. ըսի-տօ՛ քեռի, վալլա<sup>1)</sup> էտիկ էն գիշերուայ աղջիկնա, օր էրազիս ընձի ջուր տուաւ, երեսի խալէն ճանչցայ: —

Դեռ բարեկամն իւր խօսքը շարտնաւ կում էր, երբ ընթրիքը բերին: (Ընթրիքը նահապետական էր) Ընթրելուց յեայ բարեկամն գարձեալ ձեռքը մեկնեց և ասց:

— « Բարով եկար, աղբեր, իմ աշքին, իմ երեսին. թողութիւն էրա, տունը քուկր ա,

1) Աստուած է վկայ:

մեր ղուսուրին՝<sup>1)</sup> մի մնայ»:

Ես վոխադաբարձար նրան շնորհակալութիւն յայտնեցի և հեռացայ սեղանից։ Ընթրիքից յետոյ՝ բերին թեյ. բաժակները դպուած էին պղնձեայ սկուտեղի վերայ, որը դործ են ածում և վլաֆի համար։ Թեյից յետոյ բարեկամիս հետ շատ բաների վերայ խօսեցինք. ի մեջի այլոց և հացի սղութեան վերայ։ Այդ մասին բարեկաման ինձ սկսեց պատմել թէ-ինչեց է, որ այս երկու տարի է հացը թանդ է լինում։ Նա ասաց.

— «Աղբեր, էս երկու տարի ա, օր անձրեը իրան վախախին չե գալըմ.. իլլաքի էս տարի անձրեի երես չտեսանք. աղբեր, ի՞նչ մատաղ անել... ի՞նչ թուրքերու դոռներէն քեալա հանել ու բերել ջուրը քցել. էլ տէրտէրի կընկայ բաթաթը ջուրը դնել...

1) Պակասութիւն։

խուլա՛խա, <sup>1)</sup> չեղաւ ու ու չեղաւ. վերջը բերինք մեր մենծ տէրտէրի ու պղտի տէրտէրի իրեցիընկըտիքը, եզներու պէս լուծը դրինք ուսերին, ու չութը կապեցինք լըծից, տարանք քցեցինք մեր քովի յառուի մէջ. քեցի կընիկն էլ մաճկցը բոնած ըսկեց ջուրը վարել մէ երկու թե. էտ օրն էլ անձրե չեկաւ։ Տեսանք չի եղնի, բերինք պուրապատիկին սարքեցինք ու երկու պղտի աղջկայ ձեռ տուինք, օր տընէ տուն պըտըտումն. տօ աղբեր, ում դուռն օրա գընացին, անմենքը մէկ մէկ թաս ջուր լըցին ըտոնց վըկքը, ալուր ու եղ էր օր թօփ էրին... էդ աղջկները էղան օր, օղորդ պուրապատիկ։ Թօփ երած եզնու ալուրը էն սըհաթին ծախեցինք ու տարանք մոմի տուինք, մեր աղի հետ զըկեցինք շէկաւետրնին. աղբեր, իմ աչքիս տեսն ա, տղին հըլա աւտաս չէր հասէ աւհորնի

1) Վերջապէս։

քովը, մէկ էլ Ալագեազու<sup>1)</sup> դըլիսէն մէ սև  
սպասի ամազմ դուս եկաւ. ըստուց մէ  
քիչըմ ետեւ անձրել կաթկթայ, տէյ քիչի  
գրոնէն հասայ մեր տունը, ես էլ պուրա  
պատիկ դառայ: Աղեր, հիմիկուայ մեր  
ջահելները ըտման բանի շատ չեն հաւառ  
տրմ: ոնչ ցանքի վախտը ցարէն օրհնել կայ,  
ոնչ էլ տաւջուան պէս ակրմը գետին  
քցողի գոտիի մէջը ցարէն կը ծլի: ամմեն  
խերու բարաքեաթն էլ փախելա, ևս իմ աշ-  
քովս աեսելեմ, էլ ընչե չհաւատամ ըտ-  
ման բաների: Խնջօր, էս գարնան գըլովի  
մեր տէրտէրը գրի էր աշխ, ըսել էր օր չո-  
րային կերնի էս տաղի, օղորթ օր, էման  
եղու: Ձէ, չէ, էս քանի օրուայ անձրե-  
ները շխտկեցին օրհնեալ է Աստուած, էս  
էրկօրուայ անձրել թէ չ գար նա, էլ գէ-  
րընդի չէր բռնէ. ըորնար գետնին կը կը-  
պնէր, աղբեր, մերնէլ հացն այս առանց

1) Ալագած:

հայի մեռածն ենք:

Տեսնելով օր բարեկամն նախատաշար-  
մունքի հետ սերա բարեկամ է, սկսեցի  
ննջալ: Բարեկամն համացաւ իմ ձանձրոյժու  
և ասաց.

— «Աղեր, քունդ տանըմա... զէհ,  
ուել բերէք, ոյ կնիկ»: Անկողինս ձգուեց  
և ևս պառկեցի: Խնձ մօտ բարեկամն ձէթի  
ձրագ գնելով և „բարի դիշեր“ ասելով,  
հեռացաւ: Խրա հեռանալը և իմ խրոմ-  
փալը մէկ եղաւ:

Թէ, որքան էի քնել ինձ անյայտ էր.  
միոյն աչքերս բաց արի և պեսայ, որ  
արդէն մօտէ ձաշին: Ամառելով տյդքան եր-  
կար քնելուց, իսկոյն անկողնիցս վեր կացայ,  
լուացուեցի և զուարձախօսութիւններ տ-  
նելով բարեկամիս հետ նախաճաշեցինք իր-  
կու օր մնացի բարեկամիս ասնը և լու-  
հիւրասիրութիւն դասայ, ինչպէս առհասա-

լակ հայի սօվորութիւն է հիւրասիրել:  
Եթէ իմտեղլինիր մի ուրիշ օտար մարդ,  
դարձեալ նցնը կըգանէր նրաորդ օրը ճաշկց  
յետոյ, նոյն գիւղացիք որոնք եկեղեցու պա-  
տի տակ հաւաքուած խօսում էին, գու-  
թանները լծած քաշում էին գաշտը:  
Հետաքրքրուեցի տեսնել թէ արգեօք  
ի՞նչպէս են սկսում վարը, կամ որքան եզ-  
ներով և այլն. մանաւանդ նրանց հետ մաս-  
նակցելու էր և իմ բարեկամը: Յայսներով  
շնորհակալութիւնս մօրաքր ոջա, հետ-  
և եցի բարեկամիս գութանին: Գութանները  
գնում էին ճիշդ իմ ճանապարհով, -դէպի  
Ա. քաղաքը: Օդը մեղմ էր և զով. մեր  
գութանաւորները սայլերը ճռճռացնելով  
առաջ էին գնում. մօտ մի ժամյետոյ, հա-  
սանք որոշած արտք: Նրանք սկսեցին գու-  
թանի գործիքները սայլերի վրայից վայր  
իջեցնել: Առոյդ և աշխատասէր մաճկալը  
հրաման արձակեց միւսներին, ասելով: —

— «Դէ՛հ, տղեք, եւ մի՛ք աշէ, ջամբա-  
րակի <sup>1)</sup> կօշը <sup>2)</sup> քցէք, կօռանը <sup>3)</sup> ծերա-  
տնը <sup>4)</sup> ասորէք զցէք. խարազանը <sup>5)</sup>  
բնատէնի <sup>6)</sup> իջկիլները <sup>7)</sup> զարկէք, գութա-  
նը սարվաղ <sup>8)</sup> էրէք:

Մաճկալի <sup>9)</sup> հրամանը լսելով, խկոյն  
հոտաղները <sup>10)</sup> խառնուեցան իրար, ամենքը  
1) Նղթայ որով կասում են խարազանը:  
2) Մի մեծ երկաթէ օղակ է մի կողմը բայց,  
որը ձգում են կօռան անուանեալ սեպին:  
3) Գութանի վերայ ամրացրած ամուր  
փայտից մի փոքրիկ և ետք: 4) Մի փոքրիկ  
շղթայ աւելացրած բնատէնի վերայ:  
5) Մի հաստ փայտ որի երկու գլուխները  
անցկացրածէ երկու անեւները և մի երկար  
փայտ առաջից: 6) Երկար շղթայ որից լծում  
են տասը լուծ եղներ: 7) Ամրապինդ փայ-  
տից շինած սեպ, որը զարկում են շղթայի  
օղակի մէջ և որից կատում են մէկ զոյգ եղ-  
ների լուծը: 8) Պատրաստէք: 9) Գութանա-  
ւորը դլխաւոր անդամ: 10) Գութանի ծա-  
ռախող:

մի մի եղան ականջից բռնած մօտեցրին  
դութանին, լջները գրին վկերին և սամօ-  
տեքը կապեցին։ Արդէն պատրաստ էր  
դութանը։

Հոտաղներից ամենամեծը այսպէս ձայ-  
նեց։

— «Խաչօ ապեր, քշնք. բիրագիքս էլ  
Ծեցինք, բայց պատասխան տուող չեղաւ։  
Մեր հոտաղները անյագ կերպով հաշուում  
էին բուզեները, և որքան հնարառոր էր,  
աշխատում էին շուտ դործի կանգնել որ-  
պէս զի դութանի սուր խոփով պատուին  
ու հոգի կուրծքը։ Թէ արդեօք ինչո՞ւ մաճ-  
կալ լաջոն հոտաղին չպատասխանեց, այդ  
յետոյ յայտնուեց։ Նա դութանից վոքը ինչ  
հեռանալով՝ ծնկազոք սոլոթք էր արել առ  
Ասուած, իւրեանց գործի աջողութեան  
համար, և աղօթքը վերջայցնելոց յետոյ՝  
եկաւ դութանի մաճը բռնեց և երեսը

խաչակնքելով, ասաց.

— «Եա Տէր Ասուած, դէ՛հ տղեք, քշեցէք,  
ձեզի զուրբան, թող գոստը<sup>1)</sup> ինդայ,  
դուշմանը արաքի։ Ես ինդրել էի Ասանից  
էնքան իմ հոգիս չառնի, օր մէկ էլ դու-  
թանի մաճը բռնէի, նոր իմ ամանաթս  
առնէր։ Հիմի Ասուած իմ ձենս լսել էր, օր  
էս օրուան հասցրաւ ինձի, օր հիմիկլմեռ-  
նիմ հեշ բանից կարօտով չեմ մնայ, գերեզ-  
մնիս մէջ յուահալթ<sup>2)</sup> կը պառկիմ։ Իմ  
մեռնելէս յետև էլ թող զոչաղ կընին իրանց  
հօր տեղ կայնին ու իրանց հօր օջաղի մռախը  
չկարեն, օր գուշմանը վեքը չմնդացնեն։  
Ես Ասանից ինդրելեմ, օր իմ ամանաթս  
բանի<sup>3)</sup> մէջ առնի։ Տղեք, անբան մարդիկ  
ուրիշ գոներից հաց ուղելով են ապրմ։  
աղքեր, Ասուած մարդու տուելա ձեռ, ոտ,  
աչք, բերան ու խելք. ընչի ուրիշի մռան-

1) Բարձկամ; 2) Հանդիստ; 3) Գործ, աշխա-  
տութիւն։

նաթով<sup>1)</sup> ապրեն. դէհ, տղեք քշէք, գլուխ  
յելանք, դառէք միջակին<sup>2)</sup>):»

Իսկոյն մեր դառնալութը-<sup>3)</sup> հօրիք հօտարակիութեամբ ծռեց եղները դէպի միջակը. միւս հօտաղնելն էլ հետեցին նրան: Մեր մաճկալը դարձեալ սկսեց քաջալերական խօսքեր ասել հօտաղներին: Օրինակ.

— «Ո՞հ, տղեք ջան, քշեցէք, էրկու թև էլէրթանք ու մալը թողնենք. Եղնարածները յնչի՞ ուշացան չեկան, չետեն օր նոր գործ դրած օրը յիրեք թէ չորս թև գնացինք, կը թողնենք:»

Խօսքը բերանն էր, երբ եղնարածները փայ հասան և ձայնեցին: —

— «Բարի աջողում, Խաչօ աղբեր:»

1) Երախտիք: 2) Երկու մշակուած արտի մէջ տեղ մնացած անմշակ տեղ: 3) Ամենալիր ջին հօտաղ:

— Ասսծու բարին..., Վելօ, պատասխանեց մաճկալը: —

— «Ասուած յաջողութիւն տայ, Ասուած ած անքեատար<sup>1)</sup> պահէ. դուշմնի սրոով չէնէ:»

Այս խօսքերից յետոյ, եղնարածը մօտեցու Խարազանի հօտաղին մի կողմէ հրեց և նստելով առիւծի նման զոմիշների լծին, սկսեց քաղցր ձայնով դութանին դովիլ հետեւեա կերպով: —

Գութան, քեզի եաւաշ գովամ, Փու ամակու վեր մուտամ, Ղուըբան էղնիմ ևս քու խովիրդ, Սալիսդէլիդ, 2) խառատամիդ: 3)

Փու ծուռ էշդ 4) շատ բան կ'էնէ, Թեղ մաճդ շատ անդին է,

1) Անվնաս 2) Փոքրիկ Երկաթէ բահ, որով խստակում են դութանը անեն մի շեքու գլուխ ելնելիս: 3) Փայտից շինուած դորձիք, որի վերայ թոփն է ամրացրած: 4) Յուռ

Զեկազ ել օսկուց լաւ է,  
Դաշիմ գետները կը ձեւէ:  
Օխտը տաղին մէ անդամ,  
Խովդ օսկի ա կտըըմ,  
Ցւանջպաթին ուե օքից,  
Աղատում ես դարտերից:

Պօտուռ գոմէշ, չափուկ գնահ,  
Դաշխաց գետեկից յետ մի մնան,  
Քաշէ լուծդ քո շնքեդ,  
Օք չհանեմ ես քու կաշեդ:

Խելացի հզնարած Գեվօն իրանից էր  
ասում այս տեսակ բանաստեղծութիւններ.  
Նրբ նա իւր այս երդը վերջացրեց, ձեռա-  
ի հաստ փայտը բարձրացնելով, ասաց.

— «Դէհ, տղեք ջան, չափուկ քշէք,  
Ա, թե էլ էրթանք ու թողնենք: Լծկանը  
մեղք ա, տանենք իմ ըստծ խոտոտ մի-  
ջակները արծեցնենք, քանի ուրիշ գու-

---

փայտը, որ գութանի ըոլոր անդամները նը-  
սս վերաց է ամրացրած:

Թանաւորի մալը չէ գնացել»

Այս խօսքերից յետոյ, ձեռքի փայտով  
երկու անդամ խփելն ու տեղ համնելը մէկ  
եղաւ. բայց տարաբաղդաբար համնելուն  
պէս յանկարծ գութանը կոտրուեց: Հէնց  
այն բոպէին մեր մաճկալի ձեռքերը թու-  
լցան. նա դառնալով դէպի հօտաղները  
կցկտուր ձայնով նրանց ասաց:—

«Ե՛.... կայնէք.... գութանի էշը կոտ-  
րուաւ բկէն չետ. թողէք մալը. Ասուած  
բարին կատարէ, հմա գէշ զրկցի լուսը  
քունայ....: Ըսելին, օր յաչքը մարդ իր տը-  
րաքեցնէ, ես չէի հաւատմ, հմա ըստից  
յետև ես իր հաւատամ օր գէշ յաչքը  
ինչ ըսես կ'էնէ: Կն գեօւակէ գեօւ. Մա-  
տօն դուռը կայնած մեղի էր աշմ. մոքիցս  
անցաւ՝ ըսի ես ընձի. — քեաշկա<sup>1)</sup> գու-  
թանը դուռ չդնէի, տէյ էղ գուպէ գեօւը

1) Եթ անի թէ:

տուն մանէր, յետեւ մեր թատարուքը տես-  
նէինք: Ասսանից բարի, դէհ, տղեք, մալլը  
տարէք լու կշացրէք»:

Եղնարածները տաւարը քշեցին դէպի  
Գեղօյի ցոյց տուած միջակները արածա-  
ցնելու. իսկ մաճկալը սկսեց իւր կոարած  
գութանը շնուր որպէս զի գործը յե-  
տաձգուի: Ես նրան յաջողութիւն մաղթե-  
լով հեռացայ: Դութանի լծած ժամանակը  
թուեցի զոյգերը: Ընդամենը երկու (լուծ)  
զոյգ գոմէշ էին և ութ զոյգ եղ: Գութանի  
մօտ լծուած առաջին զոյգը կոչուում էր  
խարազան .երկորդ զոյգը՝ զարադայեց, առա-  
ջին և երրորդ զոյգը եղներ էին. զրանց առա-  
ջը-եկրորդ և չորրորդը գոմէշներ: Մնացեալ  
զոյգերնես առանձին անուն էին կրում. օրի-  
նակ զեօպակի, ինձորալուծ, գառնալուծ, և լն.  
գութանի կառավարողները տասը հոգի էին:

Գութանն այնպիսի տպաւորութիւն  
թողեց ինձ վերայ, որ հազիւ թէ կարողա-

նում էի հեռանալ նրանից: Ես Ճանապար-  
հը շարունակեցի գէպի քաղաք, բայց այն-  
քան խորասուզուած էի մտածութեան մէջ,  
որ ժամեր էին անցկացել և գեռ Ճանա-  
պարհս կէս չէր եղել շնորհիւ իմ յամը  
քայլուածքիս: Մտածութեանս օդնում էր  
և շուրջը պատած խորին լուսթիւնը:  
Վերջապէս մտածութիւններիցս սմափե-  
ցրեց արծաթափայլ լուսինը, որը իւր հա-  
մեստ դէմքը երկացրեց՝ յանկարծ ամափ տա-  
կից: Ես գնում էի գէպի արեւելք, որով և  
մինչև քաղաք հասնելս պիտի միխթարու-  
էի լուսնով, այս զգացի և ուրախացայ,  
բայց անչափ եղաւ իմ տիսրութիւնս, երբ  
յանկարծ լուսինը իւր գէմքը ծածկեց ին-  
ձանից քօղարկուելով սկ ամպով: Բաւա-  
կան սպասեցի որպէս զի նա ամպի տակից  
գուրս գայ, բայց նա չերեաց. դուցէ տը-  
խուր է, մտածեցի ես և յուսահատուելով  
ուզզեցի նրան հետեւալ խօսքերը: —

Ո՞վ լուսին լուսին, ճքագ երկնային,  
Խնչու ես տխուը, թնչ կայ քո որտում,  
Միթէ տխուը ես ամենքի աչքին,  
Թէ մեացն ինձ եւ աչպէս երկում:

Լուսափայլ դէմքեղ վրայ ուե քողով,  
Ծածկել են անդութ չար ոգիները,  
Թէ քեղ խաբել են ոռւտ խոստումներով,  
Որ կտըես մարգկանց միջն քո սէրը:

Ո՞չ, դիտեն ինչպէս է սիրսա այրուում,  
Երբ քո խոյովուած դէմքդ եմ տեսնում,  
Խնչու ես թագյնում այդ քո երեստ,  
Ո՞մ պիտի յայտնես քո անկեղծ սէրդ:

Դէհ, ելլը, ելլը ուե ամպի տակից,  
Պատոէ, դուս արի, կուրծքը երկնային,  
Զարթնի թող նախանձ ոգին խոր քնից,  
Տեսնէ քո լոյսդ ընկած մեր եզկին:

Լուսինը ցոլաց, գնաց վրդովուած,  
Կարծես մեզանից շատ էր խոյովուած,  
Գնաց հեռացաւ, ոչինչ չխօսեց,  
Իւր ախուը դէմքը ամպելով ծածկեց:

Այս խօսքերից յետոյ մի քիչ էլ սպա-

սեցի լուսին. բայց նա չերեաց. ուստի  
սաստիկ տիսրած սկսեցի շարունակել ճա-  
նապարհս:

Ճանապարհից վոքրինչ հեռու՝ նկատե-  
ցի կրակ, երկի, ասացի, եղնարածներ կը-  
լինին. մօտեցաց նրանց և տեսայ որ երեք  
տաւարարածներ բոլորուել են կրակի շուր-  
ջը և խօսում են: Բարե տուի նրանց  
և նստայ կանաչ խոտաւէտ գետնի վերայ,  
և սկսեցի լսել նրանց խօսակցութիւնը:  
Նրանցից մինը գառնալով դէպի իւր ընկերը  
սասց.

— «Ճօ, Յակօ, ղայդով բանըմ ըսա յան-  
կաջ էսենք, տես, էս աղըերս էլ մեզի ըն-  
կեր էղտւա:

Յակօն սկսեց խօսել.

— «Ճօ, Մկօ, հերու մեր հետը չէ՞իր  
Ալղլիսոյ էրթլուս:

Մկօն պատասխանեց. —

Ո՞վ լուսին լուսին, ճշագ երկնային,  
Խնչմ ես տիտուր, ի՞նչ կայ քո որտում,  
Մթթէ տիտուր ես ամենքի աչքին,  
Թէ միայն ինձ եւ ալսպէս երեւում:

Լուսափայլ դէմքեդ վրայ ու քողով,  
Ծածկել են անդութ չար ողիները,  
Թէ քեզ խարել են սոււտ խստումներով,  
Որ կտըս մարդկանց միջէն քո սէրը:

Ո՞չ, դիտեն ինչպէս է սիօսս այբուում,  
Երդ քո խոռովուած դէմքդ եմ տեսնում,  
Խնչմ ես թագցնում այդ քո երեսդ,  
Ո՞ւմ պիտի յայտնես քո անկեղծ սէրդ:

Դէշ, ելքը, ելքը ու ամպի տակից,  
Պատուէ, գուս արի, կուրծքը երկնային,  
Գարթնի թող նախանձ ոգին խոր քնից,  
Տեսնէ քո լոյսդ ընկած մեր երկթին:

Լուսինը ցոլաց, գնաց վրդովուած,  
Կարծես մեղանից շատ էր խոռովուած,  
Գնաց հեռացաւ, ոցինչ չխօսեց,  
Իւր ախուր դէմքը ամպիրով ծածկեց:

Այս խօսքերից յետոյ մի քիչ էլ սողա-

սեցի լուսնին. բայց նա չերևաց. ուստի  
սաստիկ տիրած սիսեցի շարունակել ճա-  
նապարհս:

Ճանապարհից փոքրինչ հեռու՝ նկատե-  
ցի կրակ, երեկ, սասցի, եղնարածներ կը-  
լինին. մօտեցայ նրանց և տեսայ որ երեք  
տաւարարածներ բոլորուել են կրակի շուր-  
ջը և խօսում են: Բարե տուի նրանց  
և նստոյ կանաչ խոտաւէտ գետնի վերայ,  
և սկսեցի լսել նրանց խօսակցութիւնը:  
Նրանցից մինը գտառնալով դէպի իւր ընկերը  
ասաց.

— «Տօ, Յակօ, զայդով բանրմ ըսա յան-  
կաջ էնենք, տես, էս աղբերս էլ մեզի ըն-  
կեր էղաւք:

Յակօն սկսեց խօսել.

— «Տօ, Մկօ, հերու մեր հետը չէ՞իր  
Ալլցիսոյ էրթլուս:

Մկօն պատասխանեց. —

— «Զէ, Յակօ ջան։»

Յակօն ասաց։ —

— «Ինչ լու օր չկայիր մեղլ հետ։ Տօ,  
գէղեցն օր ելանք տէ, յմօր մեր սինոս բաշը <sup>1)</sup>  
դնացինք, իմ սէլիս սոնին կոտրաւ։ Ես  
ընտեղ ըսի ընկերներուս թէ տղէք, էս  
լու նշան չէր։ Էն սհաթին մեր մշկին  
զըկեցի տնէն սոնիմ բերաւ զարկեցի ու  
քշեցի էլի տղոցը հասայ։ Գնացի օր տը-  
ղեքը թողելեն գեղի կալերու պատի տակը՝  
ես էլ թողի ու եզներիս կոտոշներից չու-  
անով կապեցի սէլի զօլերից, օր չեղնի թէ  
քաշուին։ Տղեքը էկան իմ գլխիս թօփ է-  
ղան։ ու ըսին։

— «Դէ՛հ, Յակօ ջան, մեղի ինչ պըտի  
ուտեցնես էս յիրիկուն։ ես էլ ըսի օր լաւ  
փոխնդով խաշել։ Էն սհաթին օջախը վա-  
ռեցի թիթենով, ջուրը պղնձով դրի

1) Սահմանագլուխ։

վոէն տօ, ինչքան օր մենք ըստեղ էկել  
ենք, էտքան հինգ բաշեց, չեփաւ մեր խա-  
շել ջուրը, դիտես թէ լուսահոգի նիրենի  
արլորը գառաւ։ չէ, չէ, վշելով-փչելով  
ջուրը էփեցինք. փոխնդով վըայ տու ի ու  
մեր մեծ զշէ <sup>1)</sup> մէջը լւի, եղն էլ սու-  
լիկի <sup>2)</sup> միջէն գրղով հանեցի խաշելի վըայ  
դրի, ու ըսի-դէ՛հ, տղեք, կերէք հալաւ էղնի  
խաշելը ձեզի։ Ձէ... տղեքը էման լափե-  
ցին գուշը, օր քիչ մնաց շինողը միջէն հա-  
նէին։ Տեսած լաւ օրերս էն յիրիկունը էղաւ։  
Տէյ էրթալ-գալերա 15 օր քաշեց. էման  
եալորլլ <sup>3)</sup> էղաւ, օր Ասուած խնայէ.  
Տօ, Մկծ, մէ յիրկունմ հեշ աեղ չկար, օր  
քնէինք. գիշերուայ ստղազը <sup>4)</sup> մարդու  
միսը վըէն փշաքաղմ էր. տեղ չկար օր  
հեշ չէ մարդ կրակ էնէր, հեշ չէ մէ քանի

1) Փաշտէ աման, որի մէջ կերակուր են ու-  
տում։ 2) Փոքրիկ ևեցաման։ 3) Անձրեալին։

4) Պաղ քամի։

քար տաքցնէի դօշիս գնէի, բալքի ջանս  
տաքնար: Տեյմօր էն գիշերը լուս հանե-  
ցինք, մերն էլ մեղի հասաւ: Ասուած էլ  
ըստման օր չափայնէ մեղի. քանի իմ  
միտքս ընկնմա գիշերուայ ցուրտը, միս  
վլէս դողմա:

«Տօ, աղբեր, մեր ցաւը մեղի հերիք չէր,  
եղ գալուս Խըրթզու ձորը էկանք, ըսին  
տղիքն օր, էրթանք տանձ ու խնձոր առ-  
նենք. չէ... գնացինք բաղերը մասնք սէլերը  
թողինք բաղի պատի տակը. էն սհաթին  
բաղբանջին էկաւ մեղի բարեեց ու հար-  
ցրեց թէ,

«Ի՞նչ կ'ուղէք»:

— Մենք էլ ըսինք, տանձ ու խնձոր:  
Ինչ օրս, էղ մարդու հետ գնացինք բաղի  
մէջ առանք մեր սէլերու բեռթըմեցինք,  
ևտ գառանք էկանք սէլերու քովը, տեսայ  
իմ էն ջրդալ <sup>1)</sup> կարմիր եղը չկայ, տօ ինչ

1) Կեռ պողեր:

էղաւ եղս: Զես ըսէ, կ'երթայ փշատի ծա-  
ռը ուտելու, ընտոնք էլ կըբռնեն: Տօ, խօ  
մենակ ընտեղ չէր. տէյ երթալ գալերս  
հաղար զոռու զէիի <sup>1)</sup> հետ կոռուանք. չէ, չէ,  
դաւով դառապով առանք եղը. հմա յիրէք  
մանէթս գնայց: Տօ զիտեն էն Խըրթզու լս-  
զերն էլ պակաս չեն մեր թարամի թարա-  
քամէքէն: Միօ ջան, ի՞նչ զըլսիդ ցաւ-  
ցընեմ, խուլայսա, էկանք <sup>2)</sup> տուն հասանք,  
ձանպէն հոտաղիս վըից էլ սէլը անցաւ,  
հմա փառք Ասու, նայսէմ թէի գըլսիը  
քերծեց: Տօ հէր օրհնած, հլա հարցու, թէ  
ի՞նչ բերինք տասնը հինգ օրուայ մէջը.  
էրկու սէլով բերածս էղաւ թէ ըստեղաց  
քերէն թէ ընտից բերած տանձ ու խնձո-  
րեց աշխատանքս ալայը <sup>2)</sup> տասը մանէթ,  
մէ ջուխզմ էլ մօրս բաբուջ: Տօ տղպեր,  
գեղացին օր ֆօղ շատ ըւնենայ, ի՞նչ պը-  
տի ապրի. ըհան ինչխօր մենք արտի հը-

1) Արդե պահապան: 2) Բգնամէնը:

մար իրար ենք ջարդմը յանքի վախտը:  
Մկօ ջան, մեր գեալին աշէ, խօ չե քնէ,  
մալն էլ լսւ կշտացաւ. տիետ կշեռքն  
էլ էկէլա թօփ աստղի տեղը. աղբեր, եա-  
ւաշ եաւաշ մոլը ետ դարձնենք, աէյ զու-  
թանի քովք համանք կէս զիշեր կէղնի.  
Ծելու վախտին կը հասցնենք. յնչի յու-  
շացնենք որ մեր վրայ խօսայ Սաքօ արենը»:

Այս ասելով նրանք ասւարը քշեցին  
դէպի գութանը: Ես էլ անսայ որ իմ ճա-  
նապարհովս են դնում, հետեւցի նրանց:

Ճանապարհին ես մոտածումէի և պատ-  
կերացնում մտքիս մէջ Յակոյի ճանապար-  
հորդական ազգու պատմութիւնը, նկարա-  
գրութիւնը, երբ յանկարծ ձայն հասաւ  
ականջիս: «Ըհան մալը էկու», ձոյնողն էր մի  
կարձանհասակ մարդ, որը երեւի դրանց ա-  
ռաջնորդն էր կամ մէջկալը: Նա հարցրեց.

«Ե՞, աղեք ջան, մալը լսւ կշտա-

ցրիք, հըմայ ապրիք, լսւ վախտին հա-  
ցրիք»:

— «Յետոյ ձեռքը բարձրացնելով դէպի  
կշեռք կոչուած աստղը, որը մեր ժողովը-  
դեան համար ժամացոյցի տեղ է ծառա-  
յում զիշեր ժամանակ և տաց»

— Դէհ, տղէք ջան, տեսէք կշեռքը ուր է  
համել վախտ ա, էլ միք աշէ, քանի մեր  
քաւոր Սաքօյի գութանը չի լըծուել».

Հոտաղները իսկցին անսալով մաճկալի,  
հրամանին, լծեցին. մաճկալը ձայնեց.

«Դէհ տղէք, մալը ժաժ տուէք»:

Բողորը սկսեցին ձայն տալ միաբերան և  
քաջալերել եղներին կամ գոմէշներին. և  
գութանը հսկոյաբար պատռում էր սե-  
հողը: Բաւական վարելուց յետոյ՝ լոյսը  
բացուելուն մօտեցաւ. մեր հոտաղները  
տեսնելով, որ մօտեցաւ հանգստանալու ժա-  
մանակը, խնդրեցին մաճկալին, որպէս զի

Հոռովիլ տայ: Մաճկալը սկսեց երգել այս-  
պէս:

Լուսը լուսացաւ,  
Բարեն շատացաւ,  
Ո՛վ սուրբ Գրեգոր,  
Տնւը մեղի լաւ օր,  
Հայ հոռովիլ, Հայ:

Իսկոյն հոտաղներն էլ ոկսեցին մաճկալի  
Տետ ձայնակից լինել և հոռովիլ տալ, ա-  
սելով-«այ հոռովիլ էլ հահ ։։յ, հօհ հօհ հօհ  
հոյ հոյ հոյ հոյ»:

Յետոյ գարձան մաճկալին ինդրեցին՝  
ասելով:

Սաքօ աբեր, մեկէլ ըսե՞ն... ձենդ հըլա  
լաւ ա, իմացողի քէֆը զալըմա, ըսա՞ օր  
հաւասով քշե՞սք հորիքը».

— «Ըսե՞մ, բալէք ջան, ըսե՞մ», ասելով,  
սկսեց Սաքօն երգել այսպէս: —

Վարենք, վար էնենք,  
Դուշմանին գարտ էնենք,  
Յակը լալըմ ա,  
Միջակին գալմ ա,  
Հայ, հոռովիլ, Հայ:...

Յակը խառն ա,  
Հաւէն սառն ա,  
Վարժագ ինչ անուշ,  
Դուշմնի աչքը փուշ,  
Հայ, հոռովիլ, Հայ:...

Մեր էն գուշմանը,  
Թող մնան տանը,  
Կոտքի ընտուր սունը,  
Կորի անունը,  
Հայ, հոռովիլ, Հայ:...

Դէ՛չ, տղեք ջան, էս ակոն էլ դուս  
քցինք, ու մէ ծըլտի քունմ տանք, օր  
մալն էլքիմ յուահաթին: <sup>1)</sup>

Մի քանի բովէից յետոյ գութանը հա-

1) Հանդիսատ:

սառ սահմանեալ տեղը և կանգնեց. Խոկոյն  
հոստաղները իւրաքանչիւրը իւր լձի առաջ  
պառկելով գութանի բոցած սև հողի վա-  
փուկ ակոսի մէջ, ընկդմեցին խոր քնի մէջ:

Դիաղարեց ամեն ձայն, ալիրեց խորին  
լոռութիւն:

Արշալոյսը սկսել էր ծաղել և հետ-  
զիւտէ աստղերն էլ աղօտանտմ էին և  
անյայտանում երկնքի կապուտակ կամարի  
վերայ, երբ ես գութանաւորներին թողի  
խոր քնի մէջ. մաքումն նրանց յաջողո-  
թիւն ցանկալով՝ վերադարձոց քաղոք:

Տասն և հինգ օր յետոց՝ սեփհական գոր-  
ծի պատճառով գարձեալ գնացի Մարմաշէն  
գիւղը և ճանապարհին պատահեցի նոյն  
գութանաւորներին, որոնց հետ ճանապար-  
հորդեցի, որովհետև նոր էին վերադառ-  
նում վարելուց:

Բարեկամիս հարցրի թէ, «արգեօք ինչո՞ւ  
այսպէս շուտ վերադարձաք» նա պատաս-  
խանեց:

— «Աղբեր, ջաղացը կորցրել ես չախ-  
չախին ես մնե գալըմ. յուրա առաջուայ  
վախտերու պէս գութան էրթալ էղնիր,  
թամամ եռեսուն (30) օր մեր գոտիկը չէր  
քանդուի: Հըմի ի՞նչ վարենք, արտ չկայ...  
ջան գըլու և յիրէք կօտի տեղ ունինք. հա-  
րոս թողնենք, թէ ցանենք: Առաջուայ  
վախտերը գութանը տուն բերելուս, բայ-  
րախներով, խաղ ու տաղով, շատ վախտ էլ  
զուռնայ չախլով տուն կուգայինք ու ձե-  
ռաց մատաղ կը կարէինք: Հըմի սուս ու  
փուս, ոչ բայրաղ ոչ բան... ի՞նչ են վա-  
րէ, օր ինչ էլքէֆ էնենք, եա մէ գիւն-  
լուկ <sup>1)</sup> եա գունլուկ ու կէսա:

Ալրելի ընթերցող, ինչպէս զրքցիս մի  
քանի կեաերում նկարագրուեց, մեր խեղձ

1) Օբակար:

գիւղացին ճիշդ Աստուծոյ նախահայր Ա-  
դամին տուած դատավճռի համեմատ է  
հաց հայթայթում այսինքն, „քրտամբ  
երեսաց քոց կերիցեա զհաց քո“:

Թշուառ զիւղացին հողի հետ պատե-  
րազմում է, ամեն տեսակ նեղութիւն կրում  
է. քաղջ, ծարաւ ցուրտ, որպէս զի մի կտոր  
հաց ձեռք ձգէ. բայց այն էլ ուրիշներն  
են խլում նրանից: Եյդ ուրիշները են՝ վաշ-  
խտուները, և ագահ վաճառականները  
որոնք մի նշնին գումար փոխ տալով զիւղա-  
ցուն, նրան անում են իրենց ճորտը....

Այնուհետև խեղճ զիւղացին հնար չէ  
դտնում նրանցից ազատուելու: Երբ զիւ-  
ղացին փողի գումարից կրկնապատիկ աւե-  
լի տօկուր բերում է աղին, նա փոխանակ  
շնորհակալութեան, զիւղացուն ասում է..

— «Զեր խերը ձեր զլուին ուտէ. աղ-  
բեր, մարդ իրան փողովը կրակն է ընկնում:

դէ՛հ, հեր օրհնած, էս քա՞նի տարի է փողս  
վրէդ է, թէ պատիւ էր, էս էլ էր հերիք»:

— Իսկ թշուառ զիւղացին վեզը ծռած  
նայում է աղին և աղաւելով ասում:

«Աղա ջան, զլսիդ մեռնիմ, էս տարի  
էլ թող մնայ, իմ էն ձորի հերկայալին քե-  
զի հըմար կը ցանեմ: աղա ջան, ընձի պա-  
հողը էն արան ա, հոգի ա բուսնրմ: գու-  
օր էն իմ նեղութանս հասար, քեզի զուր-  
բան էլնի իմ հերկայալիս»:

Իհարկէ զիւղացին ստիպուած պէտքէ  
կեղծաւոր էր: Իսկ ազահ աղան կեղծաւոր  
ժալիտով ասում է իւր ձեռք քցած որսին.

«Թո՞ղ քու խաթերդ էս տարի էլ մնայ.  
Հմա էրկու կօտ կորկոտ կը բերես խանու-  
միդ»:

Խեղճ զիւղացին ուրախանալով՝ ասում է.

— «Լաւ, աղա ջան, զլսուս վրայ»:

Վ Ե Բ Զ:

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԱխաԼ	Ուղեղ	Երես	Տող
Փատակեց	Փլատակեց	8	3
Հեղնորդն	Հեղնորդն	18	1
Խաչ	Խալ	19	11
Ճեջե	Ճիջե	22	8
Չետաձգուի	Հետաձգուի	34	7
Ախալցխայ	Ախալցխա	37	18
Գէղեցն	Գեղեցն	38	4

ՎՐԻՊԱԿՆԵՐ  
ՀԱՅՈՒԹՔԻ ԲԱՏ. ՊԱՏՍԱԿԱՆ  
ՔԱՆԴԱՐԱՆ

ԱՆՁՈՐԴԻ

96	99	պատի	100
97	100	պատառութիւն	պատառութիւն
98	101	զարդար	զարծելու
99	102	առաջ	առաջ
100	103	առաջանալ	առաջանալ
101	104	առաջանալի	առաջանալի
102	105	առաջանալու	առաջանալու
103	106	առաջանալուց	առաջանալուց
104	107	առաջանալու առաջանալու	առաջանալու առաջանալու
105	108	առաջանալու առաջանալուց	առաջանալու առաջանալուց
106	109	առաջանալու առաջանալու առաջանալու	առաջանալու առաջանալու

Ե բառը կատար

184

R - 20

